

Աշխատանքային թերթիկ 4.7

Տարբեր մակերևույթների վրա շփման համեմատություն

Անուն-ազգանուն _____ Ամիս-ամսաթիվ _____


Պետրոսն ու Արամը չափեցին, թե իրենց խաղալիք ավտոմեքենան ինչքան հեռու կգնա տարբեր մակերևույթների վրայով: Ահա նրանց արդյունքները.

Մակերևույթ	Ավտոմեքենայի անցած ճանապարհը, սմ			
	Ստուգում 1	Ստուգում 2	Ստուգում 3	Միջին
խոտ	11	10	9	10
թաց ասֆալտ	19	21	20	20
ավազ	12	14	13	13
ցեմենտ	15	18	18	17

1 Պետրոսն ու Արամը ինչո՞ւ կրկնեցին չափումները:

2 Հաշվիր միջին հեռավորությունը, որ մեքենան անցավ յուրաքանչյուր մակերևույթի վրայով, և գրանցիր աղյուսակում:

3 **ա** Գծիր արդյունքների ձողային գրաֆիկը:



բ Ո՞ր մակերևույթի վրայով մեքենան գնաց ամենից հեռու: Փորձիր բացատրել պատճառը:

գ Բացատրիր, թե ինչո՞ւ մեքենան խոտի վրայով շատ հեռու չգնաց:

4 Կանխատեսիր արդյունքները, եթե ասֆալտը ոչ թե թաց, այլ չոր լիներ: Բացատրիր կանխատեսմանդ պատճառը:

Գնահատիր դասընկերոջդ աշխատանքը հետևյալ աղյուսակի օգնությամբ:

Գնահատվող գործողություն կամ հատկանիշ	Այո կամ ոչ
Պատշաճ պատճառ նշվե՞լ է չափումների կրկնության համար:	
Միջին հեռավորությունները ճի՞շտ են հաշվարկվել:	
Ձողային գրաֆիկը մատիտով ու քանոնո՞վ է գծվել:	
Առանցքների գծերը ճի՞շտ են տարվել:	
Առանցքերը նշվե՞լ են տառերով, և միավորները լրացվե՞լ են:	
Ձողային գրաֆիկը պատշաճ վերնագիր ունի՞:	
Բոլոր ձողերն էլ ճի՞շտ բարձրություն ունեն:	
Ամենամեծ հեռավորությունն ապահովող մակերևույթը ճի՞շտ է որոշվել, պատճառը նշվե՞լ է:	
Խոտի վրայով մեքենայի շարժման համար ճիշտ պատճառ նշվե՞լ է:	
Կանխատեսում արվե՞լ է թաց ասֆալտը չորով փոխարինելու արդյունքի վերաբերյալ, և դա բացատրվե՞լ է:	

Հիմա տես դասընկերոջդ գնահատումը քո աշխատանքին: Համաձա՞յն ես դասընկերոջդ գնահատականին: Ինչպե՞ս կարող ես աշխատանքդ բարելավել:
